

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. ԿՈՅՈՂՅԱՆ

ԿՈՄՊԼԵՔՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ՄԵՂՎԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



638.1

4-63

22078

Կոթողյան, Ա. Մ.

Կոմիտեի ժողովուրդի հետ խոս-
ված խոսքի ժողովուրդ...

12. 304.

638.132

Ա. Մ. ԿՈԹՈՂՅԱՆ

Կ-63

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961

**ԿՈՄՊԼԵՔՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ՄԵՂՎԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

22078

A 19364



А. М. КОТОГЯН
КОМПЛЕКС МЕРОПРИЯТИЙ
ПО ПОВЫШЕНИЮ ПРОДУКТИВНОСТИ
ПЧЕЛОВОДСТВА

(на армянском языке)

Издание Министерства
Земледелия Армянской ССР
Ереван, 1949 г.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մեղվարուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության օժանդակ, բայց առաջնակարգ ճյուղերից մեկը. նրա նշանակությունը Հայաստանում օրեցօր էլ ավելի է բարձրանում՝ կապված մեր երկրի խոտացանքաշրջանառության, անասնապահության, սլողաբուծության և այգեգործության զարգացման հետ։ Այն փաստը, որ 1950—51 թվերին մեր ցանքաշրջանառության մեջ ցանվելու են 75—100.000 հեկտար խոտաբույսեր, ապա դրանց փոշոտման և բերքի բարձրացման համար անհրաժեշտ է մոտ 400.000 մեղվի ընտանիք, այնինչ առ այսօր մեր կոլխոզային ֆերմաներում ունենք մոտ 59.000 մեղվի ընտանիք, որպիսի քանակությունը, իհարկե, չի կարող բավարարել մեր երկրի ժողովրդական տնտեսության պահանջները։ «Մեղվարուծությունը չի կարելի դիտել որպես մի ճյուղ, որից ստացվում է միայն մեղր ու մոմ, այլ նրա արժեքը մեր ժողովրդական տնտեսության մեջ, ինչպես ընկ. Բենեդիկտովն է ասել, 15 անգամ ավելի բարձր է նրանով, որ նրա միջոցով կատարվում է էնտոմոֆիլ կուլտուրաների խաչաձև փոշոտումը, և դրանով իսկ ապահովվում է մեր սոցիալիստական սլողաբուծության, այգեգործության, խոտացանքաշրջանառության ու անասնապահության զարգացումը»։

Մեղվարուծությունն իր ներկա տեմպով չի շարժվում գյուղատնտեսության մյուս ճյուղերի հետ զուգընթաց, այլ նա առաջ է գնում շատ դանդաղ և չի ապահովում մեր ժողովրդական տնտեսության այսօրվա պահանջները։

Անհերքելի փաստ է, որ Հայաստանը իր բնական պայմաններով, աշխարհագրական դիրքով, սեռապոլիկայում տարածված մեղրատու մեղուների արժեքավոր ցեղով ստեղծում է լիակատար պայմաններ մեղվարուծությունը զարգացնելու և իր արժանավայել բարձրության վրա դնելու։

Ինչպիսի՞ ուղիներ գոյութիւն ունեն չայտատանի կոնկրետ
սլայմաններում մեղվարուծութեան զարգացման ու մթերատվու-
թեան բարձրացման համար: Այդ ուղիները հանդիսանում են
գիտութեան նվաճումների անթերի իրադրութեամբ, նոր տեխնի-
կայի կիրառութեամբ և աշխատանքի բարձր արտադրողականու-
թիւնը մեղվարուծութեան արտադրութեան մեջ:

Մեղվարուծութեան մթերատվութեան բարձրացման ու նոր
զարգացման հարցի լուծման միջոցառումներից մեկը հանդիսա-
նում է Դիտութիւնների Ակադեմիայի Անաստասիանութեան ինս-
տիտուտի մշակած «մեղվի ընտանիքների բազմացման և բերքի
բարձրացման» կոմպլեքս միջոցառումների մեթոդը, որպիսին կի-
րառելը արտադրութեան մեջ կբարձրացնի նրա մթերատվու-
թիւնը:


Այս մեթոդի առավելութիւնը կայանում է նրանում, որ նա
հնարավորութիւն է տալիս միաժամանակ լուծելու երկու խոշոր
խնդիրներ, այն է՝ կարճ ժամանակում բազմացնել մեղվի ընտա-
նիքների քանակը և դրանով լուծել էնտոմոֆիլ կուլտուրաների
փոշոտման խնդիրը ու դրան զուգընթաց բարձրացնել մեղվի
ընտանիքների մթերատվութիւնը:

Առաջարկած մեթոդի առավելութիւնը կայանում է նաև
նրանում, որ վաղ դարեանը արհեստական սաքացումների մի-
ջոցով մեղվի ընտանիքների համար ստեղծում ենք վերին առ-
տիճանի բարենպաստ սլայմաններ, կարողանում ենք մաքրիմալ
չափով և նպատակահարմար ձևով օգտագործել մեղվի ընտա-
նիքներում եղած միւնիմալ քանակութեամբ մեղուներին ու քիչ
մեղուներով ընի ներսում պահպանել նորմալ ջերմութիւն, որը
պահանջվում է մեղվի ընտանիքների աճեցման ու բազմացման
ժամանակաշրջանում:

ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ

Մեղվի նորմալ ընտանիքը բաղկացած է երեք տեսակի անհատներից. դրանք մեկը մյուսից տարբերվում են իրենց կատարած աշխատանքով, կազմությամբ, մեծությամբ, գույնով ու մի շարք այլ նշաններով:

Մեղվի նորմալ ընտանիքն ունի մեկ մայր, որը միմիայն բաղմացման ֆունկցիա ունի: Մեղվի ընտանիքում կան տասնյակ հազարավոր աշխատավոր մեղուներ (նույնպես էգեր, որոնք ունեն չղարգացած սեռական օրգաններ և զուրկ են բոսերի հետ զուգավորվելու ընդունակությունից). աշխատավոր մեղուներն ընտանիքում կատարում են բոլոր տեսակի աշխատանքները:



Նկար 1. a. մայր, b. աշխատավոր մեղու, B. բուռ:

Մեղվի ընտանիքում դարնան երկրորդ կեսից մինչև աշունը լինում են նաև բոսեր՝ արուներ, որոնք ընտանիքում ոչ մի աշխատանք չեն կատարում, բացի երիտասարդ մայրերի հետ զուգավորվելուց: Անավասիկ այս երեք տեսակի մեղուներն ապրում են մեղվի ընտանիքում որպես բխլոգիական մեկ միավոր և մեկն առանց մյուսի երկար ապրել, աշխատել և բաղմանալ չեն կարող:

Մայր մեղուն.— Մայր մեղուն ընտանիքի երեք տեսակի անհատներից ամենամեծն է. նրա մարմինն ունի մոտավորապես

20—25 մմ երկարություն. հատկապէս երկար է նրա որովայնը, դրա համար էլ թվում է թե մայր մեղվի թևերը կարճ են՝ համեմատած աշխատավոր մեղվի թևերի հետ:

Նորմալ ընտանիքում լինում է միայն մեկ մայր, երկու կամ ավելի մայր մեկ ընտանիքում չեն կարող ապրել, որովհետև նրանք իրար հետ շատ թշնամարար են վարվում. հանդիպելիս հարձակվում են իրար վրա և ոչնչացնում մեկը մյուսին, ուժեղը, երիտասարդը թուլերին, ծերերին: Նրբեմն միայն պատահում են երկու մայր մեկ ընտանիքում՝ մայր ու աղջիկ, նրանք էլ աշխատում են իրար չհանդիպել. այդ երեւոյթը տևում է 15—30 օր, որից հետո մեղուները ծերացած մորը ոչնչացնում են:

Մայր մեղուների միակ պարտականությունն է սերնդի փերարտադրումը ձվեր դնելու միջոցով: Դրած ձվերի քանակը կախված է տարվա ժամանակից, կերից, արտաքին և ներքին պայմաններից: Մայրը դարձան սկզբներին սկսում է ձվեր դնել մեկ օրում 100—200 հատի սահմաններում և աստիճանաբար շատացնում. բարենպաստ պայմաններում պտղատու մայրը կարող է օրական ձվադրումը հասցնել մինչև 2000 հատի և ավելի:

Մայր մեղուն դնում է երկու տեսակի ձվեր՝ բեղմնավորված, որոնցից դարդանում են աշխատավոր մեղուներ կամ մայրեր, և չբեղմնավորված, կոչուածին (պարթենոգենեզիս) ձվեր, որոնցից դարդանում են բացառապէս բոռեր:

Մի սեզոնի ընթացքում բարենպաստ պայմաններում մեկ մոր դրած ձվերի քանակը հասնում է 150.000-ից մինչև 200.000-ի և ավելի: Մայրը կարող է ապրել 5 տարի, բայց նա 2 տարեկանից հետո պակասեցնում է իր ձվադրումը. դրա համար անհրաժեշտ է երկու տարին մեկ անգամ ծեր մայրը փոխարինել երիտասարդ մայրով: Բջիջից դուրս եկած երիտասարդ մայրը 5—7 օրական հասակում պատրաստվում է թռչելու և իր արտաքինով այնքան է փոքրանում, որ շատ է դժվար է տարբերել աշխատավոր մեղուներից: Մայրը սեռականապէս լրիվ հասունացման է հասնում 5—11 օրական հասակում: Մայրը իր ամբողջ կյանքում դուրսավորվում է բոռի հետ միայն մեկ անգամ: Զուգավորվելուց 3—5 օր հետո նա սկսում է ձվեր դնել: Շատ հաճախ եղանակների վատ լինելու պատճառով մոր դուրսավորումը բոռի հետ կարող է ուշանալ մինչև 20—25 օր, որից հետո նա նորմալ կարգով կդուրսավորվի և կսկսի ձվեր դնել:

Կավ, նպաստավոր եղանակներին մինչև 30 օր չդուրսավոր-

վող մայրն անհրաժեշտ է փոխարինել նոր մայրով: Բացառու-
թյուն կարող են կազմել միայն այն մայրերը, որոնք զուգա-
վորվում են ուշ աշնանը և հաջորդ տարվա դարնանը նոր սկսում
ձվեր դնել:

Բռն.—Բռնը տարբերվում է մայրերից և աշխատավոր մե-
ղուններից իր հաստությամբ և որովայնի կլոր վերջավորությամբ.
Նրա մարմնի երկարությունը մոտավորապես հավասար է 15—17
սմ-ի: Նա չունի իր սաների վրա մազ կամ փոշի հավաքելու
զամբյուղը (մայրերի մոտ ևս բացակայում է). բռները չունեն
նաև խայթոց. նրանց բարդ բերանը լավ չի զարգացած և չի
հարմարեցված նեկտար հավաքելու համար, դրա համար էլ բո-
ռերն ամենատառտ նեկտարատու ծաղիկների մեջ կարող են սո-
վից մահանալ:

Զուգավորվելուց հետո բռնը ոչնչանում մեռնում է, իսկ
նրա սեռական օրգանները կտրվելով մնում են մայր մեղվի մոտ,
որը վերադառնում է փեթակ և այդ վիճակով մնում է այնքան
ժամանակ, մինչև որ բռնի սերմնարանից սպերման (սերմնահե-
ղուկը) լրիվ չափով ներծծվի իր սերմընդունարանը: Մայր
մեղուն իր ձվարանի ցածի մոտում ունի հատուկ օրգան, որը
կոչվում է սերմընդունարան. այնտեղ հավաքվում է զուգա-
վորման ժամանակ բռնից ստացված ամբողջ սերմնահեղուկը և
4—5 տարվա ընթացքում աստիճանաբար օգտագործվում ձվա-
բջիջների բեղմնավորման համար:

Երբ մայրը զուգավորվելուց հետո փեթակ է վերադառնում,
հասարակ աչքով երևում է նրա վերջավորությունից (հետանց-
քից) սպիտակ բարակ թելի նման 2—3 սմ երկարությամբ դուրս
ընկած՝ բռնի սեռական օրգանների մնացորդը. դրանով մեղվա-
պահները որոշում են մայր մեղվի զուգավորված լինելը: Մայր
մեղվի զուգավորման համար անհրաժեշտ է արևոտ և տաք եղա-
նակ, այսինքն սովերում պետք է լինի 20—27° ըստ C-ի ջեր-
մություն. այդ իսկ պատճառով նրանք դուրս են գալիս զուգա-
վորվելու առավոտյան ժամը 11-ից մինչև ցերեկվա ժամը 3-ը,
երբ եղանակը տաք է, բռներն էլ այդ ժամանակ սկսում են իրենց
խաղը:

Բռնը թե փեթակում և թե դրսում ոչ մի աշխատանք չի
կատարում. նրա միակ դերն է, ինչպես ասվեց, երիտասարդ մոր
հետ զուգավորվելը, այն էլ հաղաբից մեկին է վիճակվում:

Բռները փեթակից դուրս են գալիս միայն օրվա ամենա-

տաք ժամերին: Բոլոր հայր չունի, նա դարդանում է կուսածին կերպով, չբեղմնավորված ձվերից: Բոուերն ապրում են մի սեզոն՝ մինչև գլխավոր մեղրաբերքի վերջը, որից հետո աշխատավոր մեղուները նրանց զրկում են կյանքից:

Այսպիսով մեղվի նորմալ ընտանիքը անցնում է ձմեռանոց առանց բռնի, իսկ այն ընտանիքները, որոնք չունեն մայր կամ ունեն չգուգավորված մայր, նրանք բոուերին չեն ոչնչացնում, հետևաբար գլխավոր մեղրաբերքից հետո եթե նկատվի մեղվա-նոցում ընտանիք, որտեղ բոուերն ազատ մուտք ունեն, դա կնշանակի, որ այդ ընտանիքը կամ մայր չունի, կամ եթե ունի, ուրեմն դեռ գուգավորված չէ:

Բոուերի դեմ պայքարելու համար պետք է.

ա) ջոկել բոլոր փչացած բոուաչեզերը և հալել.

բ) պահել միայն երիտասարդ մայրեր 2 տարուց ոչ ավելի,


գ) ընտանիքներին տալ լրիվ շրջանակներով մոմաթերթեր.

չպետք է մոռանալ, որ մեղուների մեջ կա բոուաբջիջներ պատ-րաստելու բնական պահանջ, իսկ մայրերի մեջ էլ կա չբեղմնա-վորված ձվեր դնելու բնական պահանջ. դրա համար շատ դեպ-քերում մեղուները մոմաթերթը կրծում և տեղը պատրաստում են բոուաբջիջներ:

Նկատի ունենալով վերը նշված հանդամանքը, անհրաժեշտ է դարնանը, երբ մեղուները սկսում են բոուաչեզեր գործել, իսկ մայրը՝ բոուաբջիջների մեջ ձվեր դնել, այդ ժամանակ փեթակի մի կողքից դնել դատարկ (կառուցողական) շրջանակ, 3—4 օրից հետո այդ շրջանակի դործած մեղրահացը (դալաղը) կտրել և նորից դնել տեղը, մինչև որ մեղուները դադարեն բոուաբջիջներ գործելուց, իսկ մայրը չբեղմնավորված ձվեր դնելուց. այսպիսով մեղուները կբավարարեն իրենց բոուաբջիջներ կառուցելու հա-կումը և մայրերը չբեղմնավորված ձվեր դնելու հակումը, փեթա-կում չեն լինի մեծ քանակությամբ բոուեր, և այսպիսով կբար-ձրանա նաև ընտանիքի մոմաբուսադրողականությունը:

Աշխատավոր մեղու. — Աշխատավոր մեղուն իր մեծությամբ փոքր է մայրերից և բոուերից. նրա սրովայնը կարճ է և ձվաձև, նրա մարմնի մեծությունը մոտավորապես հավասար է 13—14 մմ-ի, իսկ քաշը մոտ 100 մգ. 10.000 մեղուն կշռում է մեկ կի-լոգրամ: Աշխատավոր մեղուները նույնպես էլ են, բայց նրանց սեռական օրգանները լրիվ դարդացած չեն (տես նկ. 2). նրանք բոուերի հետ գուգավորվելու ընդունակություն չունեն, մայրերից

տարբերվում են նախապես, որ իրենց ոտների վրա ունեն գամ-
բյուղիկներ՝ ծաղկափուշի հավաքելու և տեղափոխելու համար, ու-
նեն նաև մոմ արտադրող գեղձեր, նրանց բարդ բերանը (կնճիթը)
լավ պարզացած է: Աշխատավոր մեղուին ընտանիքում կատարում
է դրսի և ներսի բոլոր աշխատանքները. գաշտից բերում է նեկ-
տար, ծաղկափուշի, ջուր, արտադրում է կաթնահյութ, կերակրում,
խնամում, ամրացնում ձագերին (որդերին), արտադրում է մոմ,



Նկ. 2. Մայր մեղվի սևուկան օրգանները. ա. ձկարան,
բ. գույգ ձկատարներ, գ. ոչ-գույգ ձկատարներ,
դ. սերմընդունարան, ե. ձկատար խողովակներ, զ. խայթոց.

դործում է բջիջներ, չեչեր, պաշտպանում է փեթակը արտաքին
թշնամիներից և վնասատուներից, վերամշակում նեկտարը, պատ-
րաստում մեղր, մաքրում փեթակն աղա ու կեղտից և այլն:

Մայր մեղուների ներկայությա՜նը ընտանիքում պարտա-
դիր է. եթե մայրն ընտանիքից բացակայում է, աշխատավոր
մեղուները թուլացնում են իրենց աշխատանքի տեմպը, դադա-
րեցնում են մոմադործությունը, բունը լավ չեն պաշտպանում
թշնամիներից:

Աշխատավոր մեղուները դադարանում են մայր մեղվի դրած
բեղմնավորված ձվերից և ապրում են 1—9 ամիս, նայած տարվա
ժամանակին և աշխատանքի բնույթին:


Մեղվի երեք տեսակներն էլ առաջանում են ձվից, որը դնում է մայրը. նրանց սեռերի տարբերությունն առաջ է գալիս նրանից, թե մայրն ինչպիսի ձվեր է դնում՝ բեղմնավորված թե չբեղմնավորված: Բեղմնավորված ձվերից առաջանում են մայրեր և աշխատավոր մեղուներ, իսկ չբեղմնավորված ձվերից՝ բացառապես բուեր: 2 տեսակ էգերի զարգացման տարբերությունը կախված է նրանից, թե մայրն ինչպիսի բջիջում է ձվեր դնում, և դրա համեմատ էլ մեղուները կերակրում են այդ ձվերից առաջացած թրթուրներին (որդերին) տարբեր սրակի կերերով. աշխատավոր մեղվի որդերին միայն 2 օր են կերակրում սննդով հարուստ կերերով (կաթնահյութով), որից հետո կերակրում են մեղրի ջրի և ծաղկափոշու խառնուրդ կերով, խյուսով, իսկ մայրերին 6 օր մինչև սերեկելը (կնքելը) տալիս են թե՛ սրակով և թե՛ քանակով տարբեր կեր: Ինչպես բազմաթիվ փորձերը ցույց են տվել, բեղմնավորված ձվերից մայրերի կամ աշխատավոր մեղուների առաջանալը հիմնականում կախված է կերի բնույթից և նրա փոփոխությունից (սրակից և քանակից). կերի և բջիջների փոփոխման միջոցով կարելի է ստանալ դաճած մեղուներ, խոշոր մեղուներ և այլն:

Մեղվի զարգացումը կատարվում է հետևյալ միճակներով. ձվի, որդի և հարսնյակի ձևով:

Չու. — Մայրը բջիջում ձուռն դնում է սեղանաչափ դրությամբ. ձուռն սպիտակ է, փոքր է՝ մոտավորապես 1,5 մմ. ձվում երբ սկսում է սաղմը զարգանալ, նա աստիճանաբար թեքվելով 3-րդ օրը պառկում է բջջի հատակին, և նրա մեջ զարգանում է փոքրիկ թրթուր (որդ) (տես նկար 3), որը մնում է ձվի մեջ և դուրս է գալիս այն ժամանակ, երբ նրան մեղուները կերակրում են մի փոքրիկ կաթիլ կերով — կաթնահյութով. այդ կերի ազդեցության տակ ձվի պատյանը պատռվում է, և այդտեղից դուրս է գալիս որդը. եթե կերը ժամանակին չտրվի, ձուռն չի պատռվի, և սաղմը նրա մեջ կոչնչանա:

Որդ (թրթուր). — Թրթուրը չուռի ոտներ, մարմինը բաժանված է 13 օղակների (սեղմենաանների), նրա վրա կարելի է նկատել նրա դլուխը, 4-սեղմենաանոց կուրծքը և 9-սեղմենաանոց որովայնը: Աշխատավոր մեղվի թրթուրը 1—6 օրվա ընթացքում աճում, մեծանում և ծանրանում է մոտ 1300 անգամ իր սկզբը

Նախան քաշի համեմատությամբ, իր արտաքին ձևով և կառույցով քաշով տարրերովում է մեղուներից. նա ամուր խիտինե կմախքի փոխարեն ունի նուրբ խիտինից մաշկ: Նրբ թրթուրները հասունանում են, նրանք դադարում են սնվելուց և այդ ժամանակամիջոցում նրանք մի քանի անգամ մաշկափոխություն են կատարում:



Նկ. 3. Մեղուների դարգացման ստադիաները.

1—3. ձվիկներ, 4—9. թրթուրներ, 10—11. կնքված թրթուրներ և հարսնյակներ:

Թրթուրների փոխած մաշկը և արտաթորանքը մեղուները չեն մաքրում. դրանք կաշում են բջիջների տակին և պատերին, որի պատճառով սպիտակ չեչերը աստիճանաբար սևանում են:

Մայրը, աշխատավոր մեղուները և բոները իրենց դարգացման ընթացքում կերակրվում են տարրեր որակի և քանակի կերերով, որի պատճառով էլ տարրեր են նրանց դարգացման փուլերը թե՛ թրթուրային և թե՛ հարսնյակային շրջանում (տես աղյուսակը):

Մեղու	Ձու վիճակում (օր)	Թրթուր վիճակում (օր)	Հարսնյակ կամ կնքված վիճակում (օր)	Ընդամենը (օր)
Աշխատավոր	3	6	12	21
Մայր	3	5	8	16
Բոն	3	7	14	24

Թրթուրային շրջանն անցնելուց հետո հարսնյակները կերի պահանջ չեն գդում. նրանց միակ պահանջը ջերմությունն է: Մեղուները թրթուրի 6-րդ օրվա վերջում բջիջի բերանը սերեկում են ծաղկափռու և մոմի խառնուրդով, որպեսզի սաղմը (հարսնյակը) կարողանա շնչել:

Հարսնյակը թե՛ արտաքին և թե՛ ներքին կառուցվածքով արդեն նման է մեղվին, միայն նա թևի փախարեն ունի սննդով լցված պարկեր: Արտաքին կմախքն սպիտակ գույնի և շատ նուրբ է. հարսնյակն իր զարգացման 12 օրվա ընթացքում վերջնականապես ձևավորվում է որպես մեղու, ծնոտով կրծում է բջիջի սերեկը և դուրս գալիս: Նոր դուրս եկած մեղուն լինում է սպիտակավուն, նուրբ սպիտակավուն խիտինով և մաղմղուկներով պատած. առաջին երկու օրը նա ընտանիքում միայն սնվում կազդուրվում և կատարում է շատ թեթև աշխատանքներ:

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՄԵՂՎԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Գլխավոր մեղրարերքի ժամանակ մեղվի ընտանիքներում դաշտային աշխատանքին մասնակցող (15 օրականից բարձր) մեղուներ որքան շատ լինեն, այնքան շատ նեկտար կրերեն դաշտից: Մեր կատարած փորձերը ցույց են տվել, որ մեղուն մի անգամ դաշտ գնալով կարող է միջին հաշվով 50 միլիգրամի սահմաններում նեկտար բերել. բացի այդ, մի մեղուն, բարենպաստ պայմաններում, 20—25 անգամ կարող է բերքագաշտ գնալ և վերադառնալ, ուստի անհրաժեշտ է ամեն միջոց ու ջանք դարձնել, որպեսզի գլխավոր մեղրարերքի նախօրյակին մեղվի ընտանիքում լինեն դաշտային աշխատանքներին ընդունակ մաքսիմալ քանակությամբ մեղուներ:

Ընտանիքում մեղվի ինտենսիվ բաղմացման համար հիմնականում անհրաժեշտ են հետևյալ պայմանները:

ա) Ընտանիքը պետք է ունենա երիտասարդ, բեղմնավորված մայր,

բ) համապատասխան քանակությամբ երիտասարդ խնամող մեղուներ՝ մոր դրած ձվերը խնամելու, կերակրելու համար:

գ) Ընտանիքում պետք է լինի 36⁰ ըստ C-ի ջերմություն:

դ) Լինի կեր, որն անհրաժեշտ է որդերի զարգացման համար:

Մեղվի ընտանիքում ձվերի քանակը կախված է մայր մեղվից, որը նորմալ ընտանիքում, ինչպես վերը նշեցինք, լինում է միայն մեկ հատ, և սեզոնի ընթացքում միջին հաշվով նա գնում է օրական 900—1200 հատ ձու: Խնամող մեղուների որդի կերակրելու հատկությունը շատ բարձր է. մի մեղու միաժամանակ կարող է կերակրել 3—4 որդի, հետևաբար մեկ մոր դրած ձվերը լրիվ խնամելու համար անհրաժեշտ է, որ ընտանիքում

լինի 8000—10000 մեղու, որոնցից միայն 4000—5000-ն են խնամող մեղուներ: Մեղվի ընտանիքում նորմալ 34⁰—36⁰ ջերմաստիճան պահպանելու համար անհրաժեշտ է ընտանիքը խտացնել, կողքերից ու վրայից դնել տաքացումներ:

Փոքրները ցույց են տվել, որ բների խտացումը բարձրացնում է մեղվի ընտանիքում մայր մեղվի ձվադրումը, այսինքն՝ բազմացման տեմպը թույլ ընտանիքների մոտ 80 տոկոսով, միջակ ընտանիքների մոտ 50 տոկոսով, իսկ ուժեղ ընտանիքների մոտ 20 տոկոսով: Մեղվի ընտանիքի ինտենսիվ բազմացման համար անհրաժեշտ է, որ դարնանը ընտանիքները լրիվ չափով ապահովված լինեն կերապաշարով: Փոքրները ցույց են տվել, որ կերապաշարով ապահովված ընտանիքները անբարենպաստ եղանակներին և թույլ բերքի ժամանակ 75 տոկոսով շատ նեկտար և ծաղկափոշի կհավաքեն, քան թե պաշարադուրի ընտանիքները:

Մեղվի ընտանիքն արագ բազմացնելու և գլխավոր մեղրաբերքին հասցնելու համար մեկ մոր ձվերը չեն բավականացնի. դրա համար պետք է աշխատանքի մեջ դնել օժանդակ մայրեր. իմանալով, որ որդերին կերակրելու բնազդը բոլոր նույնանման պայմաններում ավելի լավ երևան է դալիս փոքր, 8000—10000 մեղու ունեցող ընտանիքներում, մենք լուրջ ուշադրություն պետք է դարձնենք այն բանի վրա, որ փոքրների միջոցով գտնենք այնպիսի մի մեթոդ, որով հնարավոր լինի խնամող անդործ մեղուներին ապահովել ձվերով:

Ձվի պակասը լրացնել կարելի է միայն փոքր ընտանիքներում օժանդակ մայրեր օգտագործելու միջոցով, որի ամենաանհրաժեշտ ձևը ատվողիա կամ կիսված՝ 800—1000-գրամանոց ընտանիքներ կազմակերպելն է, որտեղ մեղուները լրիվ չափով քննադրված կլինեն որդեր խնամելու աշխատանքով:

Մի շարք փորձակայաններում արձանագրվել է, որ օժանդակ մայրեր ունեցող ընտանիքներում կնքված որդի առաստաղը հասնում է 30.000 բջջի: Մեղվաբուծական ինստիտուտում՝ 35.000 է, Ալուշտայում՝ 40.000, Գոռնո-շսրում՝ 56.000, իսկ մեղ մոտ կիսված ընտանիքներում 181.796, որտեղ օբական միջին աճը հավասար է 15188 մեղվի, իսկ ատվողիաների եղանակով բազմացող ընտանիքներում կնքված որդի առաստաղը հասնում է 81300-ի, որտեղ մեղվի օբական աճը հավասար է 6775-ի:

Մեղվի ընտանիքների արտադրողականության բարձրացման գործում մեր մշակած մեթոդի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ մենք լավ խնամքի և մի շարք միջոցառումների շնորհիվ մեղվի ընտանիքների համար ստեղծում ենք դարդացման ու բազմացման լիակատար բարենպաստ պայմաններ, որի շնորհիվ աշխատավոր մեղուների քանակը ընտանիքում վեցապատկվում, յոթապատկվում է և դրա հետևանքով էլ բարձրանում է մեղվի ընտանիքների ընդհանուր արտադրողականությունը:


1939 թվին Հայկական ռեսպուբլիկական անասնապահական փորձակայանը մշակեց մեղվի ընտանիքների արտադրողականության բարձրացման նոր մեթոդ, կիրառելով մի շարք կոմպլեքս միջոցառումներ, այն է՝ մեղվի ընտանիքների բների միջշրջանակային տարածության փոքրացումը, բների ներսից եռացրած ջրով արհեստական տաքացումներ դնելը, մաքսիմալ քանակությամբ օժանդակ մայրեր օգտագործելը և քոչվորության ուսցիոնալ կազմակերպումը, որոնց շնորհիվ բարձրանում է մեղվի ընտանիքների ընդհանուր արտադրողականությունը:

Առաջին միջոցառում (բների միջշրջանակային տարածության փոքրացում). — Այս միջոցառման էությունը այն է, որ վաղ դարնանը կարողանանք մեղվի ընտանիքներում եղած մեղվային զանգվածը մաքսիմալ չափով նպաստակահարմար օգտագործել. դրա համար անհրաժեշտ է, որ մեղուները ձմեռանոցից դուրս դնելուց անմիջապես հետո փոքրացվի մեղվի ընտանիքների միջշրջանակային տարածությունը, այսինքն՝ բնի շրջանակները դրվեն մեկը մյուսից 8,5 միլիմետր հեռավորությամբ վրա (նախկին 13 միլիմետր հեռավորությամբ փոխարեն), այն հաշվով, որ Դադան-Բլատի կամ Լանդստրոտի 12-շրջանականոց փեթակներում տեղավորվի 13-ական շրջանակ (տես նկ. 4):

Միջշրջանակային տարածության փոքրացման էֆեկտիվությունը նրանում է, որ վաղ դարնանը, երբ ընտանիքի մեղուները պատում են 5 շրջանակ, մայրը կսկսի ձվերը դնել երեք շրջանակների վրա, այն էլ ոչ լրիվ, իսկ միջշրջանակային տարածությունը փոքրացնելուց հետո մեղուները կպատեն 6 շրջանակ, իսկ մայրն իր ձվերը կդնի նաև 4-րդ շրջանակի վրա: Ընտանիքի միջշրջանակային տարածության փոքրացման հետե-

վանքով սովելի հեշտ կլինի ընտանիքում պահպանել տաքու-
թյունը: Այսպիսով աշխատավոր մեղուների այն մասը, որը
զբաղվում էր տաքացման աշխատանքներով, կազաավի և կզբաղ-
վի որդեր ու ձվեր խնամելով, որի հետևանքով մեղվի ընտանիք-
ների զարգացման ընթացքը կարագանա մոտ 25—45 տոկոսով:

2-րդ միջոցառման էությունը նրանումն է, որ վաղ գար-
նանը մեղվի ընտանիքների զարգացման համար կարողանանք
ստեղծել ջերմային բարենպաստ պայմաններ: Ընդհանրապես



Նկ. 4. Բաժանարարներ: 1. Նոր 8,5 միլիմետրանոց,
2. հին 13 միլիմետրանոց բաժանարարներ:

գարնան գիշերները, երբեմն նույնիսկ ցերեկները, շատ ցուրտ է
լինում, այդ պատճառով մեղվի ընտանիքները կծիկ են կազմում
և չեն տարածվում, մայրերն իրենց ձվադրման սահմանը չեն
ընդլայնում, որի հետևանքով մեղվի ընտանիքների զարգացումը
շատ դանդաղ է ընթանում: Գարնան ամիսներին մեղվի ընտա-
նիքների զարգացման ընթացքն արագացնելու համար, մեղու-
ները ձմեռանոցից դուրս դնելուց 1—2 օր հետո, նայած կլիմա-
յական պայմաններին, անհրաժեշտ է մեղվի փեթակների ներսից
դնել արհեստական տաքացումներ: Տաքացումները պետք է դնել
այդ նպատակների համար պատրաստված թիթեղյա հատուկ
տաքարտների միջոցով: Ապարատի չափերն են՝ լայնությունը
2,5 սանտիմետր, երկարությունը 38 սանտիմետր, բարձրու-
թյունը 27 սանտիմետր (կանգստորոտի դեպքում բարձրությունը
23 սանտիմետր) (տես նկ. 5):



Նկ. 5. Տաքացման ապարատի տեղափոխումը փեթակում:

Այս ապարատները պետք է տեղափոխել մեղվի ընտանիքների կողքերին դրված տաքացման տոպրակների մեջտեղը և բոլոր կողմերից լցնել 3—6 սանտիմետր հաստությամբ դարձան, բաց թողնելով միայն տաքացման ապարատի վրայի անցքը, որպեսզի տաք ջուրը լցնելու ժամանակ ապարատի միջի օդը դուրս գա: Ապարատի ներսի անցքի ուեռինն խողովակի ծայրը

պետք է դուրս հանել փեթակի կողքի անցքից և նրա ծայրին ամրացնել արգելակ:

Ամեն երեկո առանց փեթակը բաց անելու, դրսում եղած ռետինե խողովակից այդ ապարատների մեջ պետք է լցնել տաք ջուր (80—100 աստիճանի), և ռետինե խողովակի արգելակը անհրաժեշտ է փակել, որպեսզի ջուրը այդ ապարատների մեջ այդ վիճակում մնա մինչև հաջորդ օրը (որովհետև դարձանը լինելով օդի վատ հաղորդիչ՝ իր մեջ է պահում ջերմությունը և աստիճանաբար տալիս ընտանիքին, պահպանելով նրա 34—36° նորմալ ջերմությունը): Հաջորդ օրը առավոտյան ռետինե խողովակի արգելակը պետք է բաց անել, որպեսզի սառած ջուրը թափվի ու երեկոյան միևնույն ռետինե խողովակներից լցվի տաք ջուր, առանց փեթակները բանալու: Այնուհետև արգելակը փակում ենք և այդպես սխտեմատիկ կերպով ամեն օր, մինչև եղանակները վերջնականապես կտաքանան (տես նկ. 6):


Դաշտային շրջաններում տաքացման շրջանը տևում է մինչև հունիսի մեկը, կիսալեռնային շրջաններում՝ մինչև հունիսի 15—20-ը, իսկ լեռնային շրջաններում՝ մինչև հունիսի 1—10-ը. իհարկե, այս թվերը պետք է հարմարեցնել տեղի պայմաններին:

Թիթեղից պատրաստված ապարատներ չլինելու դեպքում կարելի է այդ նպատակի համար օգտագործել զանազան մեծության շշեր:

Շշերը նախօրոք լցնում են ջրով, բերանը ծածկում խցանով և դնում ջրով լցված կաթնալի մեջ ու տաքացնում մինչև եռալը. ապա շշերը հանում կաթնալից ու միևնույն ձևով տեղավորում փեթակի ներսը, ընտանիքների կողքերին եղած տաքացման տոպրակների մեջտեղը ծածկում դարձանով: Հաջորդ առավոտյան հովացած ջուրը շշով պետք է հանել փեթակներից և երեկոյան նորից տեղը դնել եռացրած ջուր լցրած շիշ¹: Փեթակները քիչ բաց անելու և ընտանիքներից քիչ ջերմություն կորցնելու համար այդ աշխատանքը պետք է կատարել միանգամից և արագ:

Արհեստական տաքացման շնորհիվ մեղուները կոկոսն ծավալվել, մայրը կսկսի առատ և եռանդուն կերպով ձվեր դնել բուլբուլային շրջանակների վրա, որոնք պատած են մեղուներով:


¹ Որպեսզի օրական երկու անգամ փեթակը չբանաճ, կարելի է ամեն մի ընտանիքի համար ունենալ պատրաստի պահեստի շշեր: Երեկոյան հանել հովացած շշերը, իսկ տեղը դնել եռացրած ջրով լի շշեր:




Նկ. 6. Փեթակից դուրս է հանված տաբույճան արկղանի սեղանակից:



Նկ. 7. Առանց փխթակը բանալու տաքացման արդարանքի մեջ տաք ջուր օգնելու սրբոց հոր:



Նկ. 8. Տաքացիան աղաքում գտնվող և խոտով ծածկված մեծ խոտ ծառի մոտ գտնվող մեծ խոտ ծառի մոտ



Նկ. 9. Վաղ աստվածաբանական արձանագրությունների համալիրը
 (ամրագրված միջին դարերի հուշարձանների վրա)

Կարճ ժամանակից հետո մեղվի ընտանիքներում սկսում է շատանալ և կրկնապատկվել մեղուների քանակը: Գարնան ցուրտ եղանակներին մեղվի ընտանիքն իր բնում 35—36⁰-ի ջերմություն պահպանելու համար սպառում է խոշոր քանակությամբ մեղր. փեթակի ներսը արհեստականորեն տաքացնելու դեպքում կկրճատվի նաև մեղուների կողմից սպառվող կերի քանակը:

Փորձերը ցույց են տվել, որ գարնան ամիսներին սովորական Դադան-Բլատի մի պատով փեթակներում, որտեղ մեղվի ընտանիքի բուներ խտացրած և սովորական տաքացումներով ապահովված չէ և ջերմության աղբյուրն ամբողջությամբ հանդիսանում են միմիայն մեղուները, ապա ամեն մի ժամում աշգլխի ընտանիքը դեպի դուրս կկորցնի 21,59 մեծ կալորիա, իսկ 24 ժամում՝ 512,4 մեծ կալորիա, չհաշված այն էներգիան, որը ծախսում են բնի ներսում 34—36⁰ ջերմություն պահպանելու համար:

Միևնույն սիստեմի փեթակում, որտեղ մեղվի ընտանիքի բուներ խտացրած է 8 շրջանակի վրա և դրված են սովորական տաքացումներ, աշգլխի ընտանիքը նույնպես ամեն մի ժամում կկորցնի 8,84 մեծ կալորիա, իսկ 24 ժամում՝ 212,6 մեծ կալորիա:

Եթե հաշվելու լինենք միայն վերևը նշված, մեղվի ընտանիքների կողմից կորցրած, ջերմային էներգիայի վերականգնումը, ապա դրա համար անհրաժեշտ է օրական առաջին դեպքում 156 գրամ, իսկ երկրորդ դեպքում 64 գրամ լրացուցիչ մեղր, չհաշված այն ծախսվելիք կերը, որն անհրաժեշտ է բազմացման շրջանում բնում 35—36⁰ C-ի ջերմություն պահպանելու համար:

Այսպիսով, գարնանը մեղվի ընտանիքներին երկու կողմից տված ջրով տաքացումները ոչ միայն վերականգնում են մեղվի ընտանիքների կորցրած ջերմային էներգիան, այլև ուժեղ բազմացման շրջանում դիշերները բուներ պահում են տաք վիճակում և այսպիսով մեղուներին ազատում ավելորդ կեր սպառելու և ջերմային էներգիա արտադրելու աշխատանքից:

Այսպիսով մեղուները ազատվում են դիշեր-ցերեկ լարված աշխատանքի մեջ լինելուց: Ինչքան մեղուները շատ են աշխատում, այնքան շուտ ծերանում, շուտ էլ մահանում են: Պետք է հաշվի առնել նաև մի շատ կարևոր հանգամանք. այն ընտանիքներում, որտեղ օգտագործվում է արհեստական ջերմություն, ոչ միայն տնտեսվում է մեղուների կերը, այլև, որ ամենից կարևորն է, երկարում է աշխատավոր մեղվի կյանքի տևողությունը, և

այդպիսի ընտանիքները միշտ կլինեն ավելի ուժեղ, կենսունակ, աշխատանքի ընդունակ և կհավաքեն ավելի շատ բերք:

Մեր առաջարկած տաքացման ապարատներից ամեն մեկում տեղավորվում է 2—2,5 լիտր տաք ջուր. ջուրը մինչև ապարատների մեջ լցնելը նրա ջերմությունը կիջնի 90—95°-ի ըստ C°-ի, որտեղ ամեն մի լիտրը կտա 60° մեծ կալորիա, իսկ 2 լիտրը կտա 120 մեծ կալորիա: Որովհետև տաքացման ապարատները դրվում են երկու կողքից, ապա մենք ամեն մի փեթակին ամեն օր տալիս ենք 240 մեծ կալորիա ջերմություն, մոտավորապես այնքան, որքան բազմացման շրջանում ընտանիքին անհրաժեշտ է (մի պատավ փեթակները, որոնց բունը խտացրած է, կողքերից և վրայից ապահովված սովորական տաքացումներով): Մեղվի ընտանիքներն ուժեղանալով կունենան՝ 8 Դադան-Բլատի կամ 8—10 Լանդսարուտի շրջանակ պատող մեղու և 6—7 Դադան-Բլատի կամ 7—8 Լանդսարուտի շրջանակ սրղ ու ձու. այդ ժամանակ անհրաժեշտ է կիրառել երրորդ միջոցառումը:

Երրորդ միջոցառման էությունն այն է, որ մեղվի ընտանիքում եղած խնամող մեղուներին անհրաժեշտ է ապահովել որդեր ու ձվեր խնամելու լրիվ աշխատանքով, այսինքն՝ վերացնել խնամող մեղուների և մոր դրած ձվերի միջև առաջացած անհամաչափությունը, որովհետև կղա մի մոմենտ, երբ մեղվի ընտանիքում մեղվի հարարերական աճը կսկսի չափից ավելի դանդաղել: Որպեսզի մենք հնարավորություն ունենանք խնամող մեղուներին լրիվ չափով օգտագործել որդ ու ձվեր խնամելու գործում, անհրաժեշտ է ուժեղացած, սրոշ ուժի հասած ընտանիքներում օգտագործել օժանդակ մայրեր, որոնք մեզ հնարավորություն կտան խնամող մեղուներին ապահովել որդերով ու ձվերով և էլ ավելի արագացնել ընտանիքների աճման ու բազմացման տեմպը:

Քանի որ մեր աշխատանքի հաջողությունը կախված է նաև օժանդակ մայրերի ճիշտ օգտագործումից, անհրաժեշտ է այդ աշխատանքը կատարել ամենայն ճշտությամբ և մանրամասնությամբ: Այդ կապակցությամբ մենք այստեղ մանրազնին նկարագրում ենք օժանդակ մայրերի օգտագործման եղանակներն առանձին-առանձին:

Օժանդակ մայրերը կարելի է օգտագործել երեք եղանակով:

1. ՕՓԱՆԴԱԿ ՄԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԻՍՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Այս եղանակը պետք է օգտագործել այն տնտեսություններում, որտեղ կան (բեղմնավորված) պահեստի մայրեր:

Կիսման եղանակի տեխնիկան. — Երբ մեղվի ընտանիքները հասնում են որոշ ուժի, այն է՝ 8 Դադան-Բլատի կամ 9—10 Լանդստրոտի շրջանակ խիտ առ խիտ պատող մեղվի և 6—7 Դադան-Բլատի և 8—9 Լանդստրոտի շրջանակ որդու ձվի, պետք է վերցնել նախօրոք պատրաստված մի-կնույն դույնի ու սխտեմի 8,5-միլիմետրանոց բաժանարարներով մի դատարկ փեթակ ու դնել կիսվող փեթակի կողքին. կիսվող փեթակը պետք է շարժել կամ դեպի աջ կամ դեպի ձախ (նայած տեղի հարմարությանը) այնքան, որքան իր նախկին տեղի կեսն է կադմում, դատարկ փեթակը մոտեցնել և կպցնել նրան, դրանից հետո բաց անել կիսվող ընտանիքը, նրա ունեցած մեղուները, կնքված ու բաց որդերը, պաշարը բաժանել երկու հավասար մասի, մի մասը թողնել տեղում, իսկ մյուս մասը դնել կողքին դրած դատարկ փեթակի մեջ: Ձվերով շրջանակները բաժանելիս մայր չունեցող փեթակին պետք է մեկ շրջանակ ավելի տալ, որպեսզի նրա բաղմացման ընթացքը իր մյուս կեսի համեմատությամբ չզանդաղի, սրովհետև այդ ընտանիքի նոր մայր ընդունելը և ձվադրումը կառի մեկ-երկու օր:

Հին մայրը պետք է տալ նոր կադմակերպված ընտանիքին, իսկ հին փեթակում մնացած ընտանիքին անմիջապես նուկլեոուներին տալ բեղմնավորված մայր:

Մայրը պետք է տալ վանդակով: Մայրը վանդակի մեջ դնելիս անհրաժեշտ է նրա հետ դնել իր նուկլեոուից մի քանի մեղու, որպեսզի վանդակում նրան խնամեն: Վանդակի ցածի կողմից պետք է կպցնել մոմաթերթի բարակ շերտ, որպեսզի մեղուները այդ շերտը ծակելով աղատեն մորը վանդակից:

Մեղվի ընտանիքը բաժանելուց հետո այդ երկու ընտանիքների բները պետք է դասավորել փեթակների կենտրոններում և նրանց երկու կողքերից դնել մեկական չեչ կամ մոմաթերթ, ապա դրանց կողքից էլ դնել միջնատախտակներ և տաքացման տալրակներ, որոնց մեջ պետք է տեղավորել տաքացման ապարատներ կամ շշեր և ամեն երեկո տալ եռացրած ջրով տաքացումներ: Այդ ընտանիքների բները դասավորելուց հետո պետք է վերևից ծածկել շորով և փեթակների կափարիչները ծածկել:

Վերևում նշված բոլոր աշխատանքները կատարվում են օրվա
ամենատաք ու մեղուների աշխատանքի ամենախնամելիվ ժամին:

Այդ աշխատանքները կատարելուց հետո պետք է կանգնել
այդ ընտանիքներից մի քիչ հեռու և հետևել, թե դաշտից վերա-
դարձող մեղուները հավասարապես բաժանվո՞ւմ են այդ ընտա-
նիքների վրա թե ոչ. եթե նկատվում է, որ մի ընտանիքում ավելի
շատ աշխատավոր մեղուներ են մտնում, քան թե մյուսում, այդ
դեպքում այն ընտանիքը, ուր դաշտից վերադարձող մե-
ղուներից ավելի շատ են մտնում, պետք է մի քիչ կենտրոնից
հեռացնել, իսկ մյուս ընտանիքը, ընդհակառակը, մոտեցնել նրան.
այդ պետք է անել այնքան, մինչև որ դաշտից վերադարձող մե-
ղուները հավասարապես բաժանվեն այդ երկու ընտանիքների
միջև:


Այդպիսով մի ընտանիքից ստացվում է երկու հավասար
ուժի ընտանիք, միայն այն տարբերությամբ, որ մի ընտանիքի
մայրը նորմալ ձվադրում է ընտանիքում, իսկ մյուս ընտանիքի
մայրը դեռ չի ձվադրում, նա տեղավորված է վանդակում:

Այստեղ պետք է լուրջ ուշադրություն դարձնել, որ մեղու-
ները մորը անկորուստ ընդունեն, որովհետև նոր մայրերի ըն-
դունելության հարցը երբեմն առիթ է տալիս խոշոր բարդու-
թյունների. կպատահեն ընտանիքներ, որոնք հենց նույն օրում
առանց դժվարությունների նոր մորը կընդունեն. այդպիսով այդ
ընտանիքի դարդացումն ու բազմացումը ոչ մի օրով չի դան-
դաղի: Այսպիսի ընտանիքների կողքին երբեմն կպատահեն այն-
պիսի ընտանիքներ, որոնք շատ դժվարությամբ կընդունեն նոր
մորը: Այն ընտանիքում, որտեղ վանդակով բանտարկված է
մայրը, մեղուները կդառնան բռնացու. իհարկե, այս երևույթը
հազվադեպ է տեղի ունենում, այնուամենայնիվ այդպիսի դեպք
տեղի ունենալիս անհրաժեշտ է այդ ընտանիքից ամբողջությամբ
հանել բոլոր որդերն ու ձվերը, պաշարը, իսկ մորը դատարկ վան-
դակով կախել դատարկ փեթակում երկու միջնատախտակների
մեջտեղից. մեղուները կհավաքվեն ու այդ վանդակի վրա կկադ-
մեն իրենց կծիկը: Մեղուները այդ վիճակում պետք է թողնել
այնքան ժամանակ, մինչև որ կսկսեն դալաղ գործել. այդ կնշա-
նակի, որ մեղուները վանդակի տակի մոմը ծակել և մորը դուրս
են հանել, ուստի անհրաժեշտ է այդ ընտանիքին վերադարձնել
որդով և մեղուներով շրջանակներ:

Հաջորդ օրվանից այդ բաժանված ընտանիքները պետք է

առաջնային իրարից հեռացնել, որպեսզի մի ընտանիքի մեղուներն մյուս ընտանիքը չմտնի:

20—25 օր հետո այդ բաժանված ընտանիքները նորից կուժեղանան և կհասնեն նախկին սեփին, որից հետո նորից պետք է նույն ձևով այդ ընտանիքները կիսել և տալ օժանդակ բեղմնավորված մայրեր: Վերևում նշված ձևով օժանդակ մայրեր օգտագործելու համար ընտանիքների կիսում կարելի է կատարել մինչև գլխավոր մեղրարերքից 25—30 օր առաջ, որից հետո պետք



Նկ. 10. Մեկ սեղանի ընթացքում կիսման եղանակով բաղմնացված A ընտանիքի սխեման

է թողնել, որ մեղուների բաղմնացումը կատարվի ընտանիքների ներսում:

Այս եղանակի օգտագործման միջոցով մենք մեր փորձնական մեղվանոցում 1940 թ. կարողացանք ամեն մի ընտանիքում օգտագործել միջին հաշվով 6—10 օժանդակ մայր, որի արդյունքը եղավ այն, որ կոնարով փեթակներում 0,5 օժանդակ մայրերի (50 ասկ. աճի)¹ առկայությամբ դեպքում հիմնական ընտանիքում նոր դուրս եկող մեղուների օրվա աճը հասնում էր մաքսիմում 2500-ի, ապա այս եղանակով օժանդակ մայրերի օգտագործման հետևանքով նոր զարգացող մեղուների օրվա աճը հասավ 13.330-ի, որը հավասար 1,3 կգ մեղվի, որով կարելի է կադմել մեկ նորմալ ընտանիք:

¹ Երկու կոնարով ընտանիքից վերցնում ենք հավասար քանակությամբ մեղուներ, որդու ձու և միացնում իրար, դարձնում մեկ ընտանիք:

2. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԴՈՐԾՄԱՆ ՄԱՍՆԱՏՄԱՆ (ԱՏՎՈԴԿԱՆԵՐԻ) ԵՂԱՆԱԿԸ

Այս եղանակը պետք է օգտագործել այն տնտեսություններում, որտեղ պահեստի բեղմնավորված մայրեր բացակայում են: Այդպիսի տնտեսությունները պետք է առաջին տարին կիրառեն օժանդակ մայրերի օգտագործման ատվողականների եղանակը, որը նույնպես մեղվի ընտանիքների արտադրողականությունը կբարձրացնի 3—5 անգամ:

Սխտեմատիկ կերպով ամեն օր մեղվի ընտանիքներին 20—25 օր արհեստական տաքացումներ տալուց հետո, երբ ընտանիքներն արդեն ունեն 8 Դադան-Բլատի կամ 8—9 Լանդստրոտի շրջանակ պատող մեղու և 6—8 Դադան-Բլատի կամ 7—8 Լանդստրոտի շրջանակ որդի ու ձու, անհրաժեշտ է մասնատել մեղուներով պատած 3 շրջանակ (այդ շրջանակներից 2-ը պետք է լինեն որդի ու ձվով, իսկ մեկը՝ մեղրով ու ծաղկափոշով) և դրանցով կաղմակերպել մի նոր փոքրիկ ընտանիք՝ ատվողկա:

Այդպիսի փոքր ընտանիքների համար առանձին փեթակ չզրադեցնելու համար հնարավոր է մի փեթակը մեջտեղից բարակ ֆաներային միջնապատով բաժանել երկու հավասար մասի և ամեն մի մասում տեղավորել մի ատվողկա, այսպիսով մի կողմից ժամանակավորապես կտնտեսվի մի փեթակ, մյուս կողմից՝ մի ընտանիքի արտադրած ջերմությունը կօգտագործվի մյուս ընտանիքի տաքացման համար (նկ. 11):


Մասնատումը նույնպես պետք է կաղմակերպել օրվա ամենատաք և մեղուների ամենաեռուն աշխատանքի ժամերին, որպեսզի աշխատավոր մեղուների մեծ մասը լինի դաշտում աշխատելիս, իսկ ատվողկաների համար վերցրած մեղուների խոշոր տսկոսը լինեն խնամող մեղուներ:

Այդ անհրաժեշտ է նրա համար, որ դաշտ գնացող աշխատավոր մեղուները ատվողկաների հետ միասին չվերցնենք, որովհետև վերցնելու դեպքում նրանք նորից կվերադառնան իրենց նախկին տեղը, այսինքն՝ իրենց մայր փեթակը, իսկ նոր կաղմակերպված ատվողկան կմնա շատ թույլ, որի պատճառով ատվողկայում եղած որդերի ու ձվերի մի մասը կարող է սառչել ու փչանալ:

Այսպիսի երեւութները կանխելու համար անհրաժեշտ է ատվողկաները կաղմակերպելուց հետո նույն երեկոյան ստուգել նոր կաղմակերպված ընտանիքները, և եթե նկատվեն չափից ավելի թու-

չացած ընտանիքներ, ապա նրանց մայր ընտանիքներից պետք է նորից վերցնել թարմ խնամող մեղուներ և մեղուները թափ տալ նոր կազմակերպված ընտանիքի մեջ:

Ատվողիաների կազմակերպման ժամանակ պետք է շատ զգուշ լինել, որ չլինի թե պատահամբ տվյալ ընտանիքի մայրն անզգուշությամբ անցնի ատվողիայի մեջ և այդպիսով դատապարտվի անզործության, իսկ հիմնական ընտանիքն էլ մայր չունենալու պատճառով կորցնի իր բազմացման տեմպը, որով և ընկնի նրա արտադրողականությունը:



Նկ. 11. Փեթակը բաժանված 2 մասի՝ ատվողիաների համար:

Մի փեթակում երկու ատվողիա տեղավորելուց հետո յուրաքանչյուր ընտանիքի դեպի դուրս նայող կողմից պետք է դնել միջնատախտակներ ու ապա տաքացման ապարատները իրենց պարկերով: Ատվողիաների կազմակերպման օրից սկսած ամեն երեկո անհրաժեշտ է դնել եռացրած ջրով տաքացումներ:

Ատվողիաների կազմակերպումից երկու օր հետո, երբ նոր կազմակերպված ընտանիքներն արդեն զգացել են իրենց որբությունը և իրենց համար պատրաստել են մայրապտուկների հիմքեր, դրանց անմիջապես պետք է տալ հասունացած մայրապտուկներ, որոնց պետք է ամրացնել իրենց պատրաստած թափակները վրա: Եթե ատվողիաների հասունացած մայրապտուկներ

տրվել են ավելի վաղ, քան այդ ընտանիքներին որբություն զգալը, այդ դեպքում մեղուները հասունացած մայրապտուկները կոչնչացնեն: Եթե մեղվանոցում կան չբեղմնավորված մայրեր, ապա այդ մայրերը կարելի է տալ նոր կազմակերպված ընտանիքներին նրանց կազմակերպման մոմենտին, քանի դեռ նրանք չեն զգացել իրենց որբությունը:

Ատվոդկաները կազմակերպելուց մի քանի օր հետո, երբ հիմնական ընտանիքները նորից կուժեղանան և կհառնեն նախկին ուժին, այդպիսի ընտանիքներից նորից պետք է կազմակերպել ատվոդկաներ: Կարող է լինել այնպիսի դեպք, երբ ընտանիքն այնքան արագ կբաղմանա ու կուժեղանա, որ նրանից կարելի կլինի միաժամանակ կազմակերպել երկու ատվոդկա:

Ատվոդկաների կազմակերպումը պետք է վերջացնել գլխավոր մեղրարերքից մեկ և կես ամիս առաջ, որից հետո ընտանիքները պետք է նախապատրաստել գլխավոր մեղրարերքը մաքսիմալ չափով օդաադործելու համար:

Ատվոդկաների (մասնատուփերի) մայրերը զուգավորվելուց (բեղմնավորվելուց) հետո անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունը՝

1. Ատվոդկաներից հանել այն մեղրահացերը, որոնց մեջ մայրը զրել է ձվեր, և դրանք տալ մայր ընտանիքներին խնամելու համար. այդ մեղրահացերի փոխարեն ատվոդկաներին տալ ուրիշ դատարկ մեղրահացեր, որպեսզի մայրը նորից ձվեր դնի:

2. Մայր ընտանիքներից հանել մեկական շրջանակ հասունացած սերեկած սրղեր (հարսնյակներ) և տալ ատվոդկաներին:

Այսպիսով մայր ընտանիքներում եղած խնամող մեղուներին ապահովում ենք ձվեր, թրթուրներ խնամելու աշխատանքով, իսկ ատվոդկաների մայրերին հնարավորություն ենք տալիս անընդհատ ձվեր դնելու, որովհետև ջահել մայրերը հնարավորություն ունեն օրական 1000-ից ավելի ձու դնելու, բայց ատվոդկաներում խնամող մեղուների քանակը քիչ լինելու պատճառով նրանք զնում են օրական 100—200 ձու:

Ատվոդկաներին հասունացած սրղեր (հարսնյակներ) տալով օգնում, նպաստում ենք նրանց ժամանակից շուտ ուժեղանալու՝ նորմալ ընտանիքներ դառնալու համար:

Ատվոդկաների կազմակերպման ընթացքում կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ կազմակերպված ատվոդկաների մայրերը չեն զուգավորվի (բեղմնավորվի) կամ անբարենպաստ եղա-

նակներին ու մի շարք ուրիշ պատճառներից մայրերը կոչնչանան, որի հետևանքով կղանդաղի այդպիսի ընտանիքների բազմացման և զարգացման ընթացքը: Նման դեպքում երկար չպետք է դրադվել այդ ընտանիքներով, այլ դրանց անմիջապես պետք է միացնել իրենց հարևան ատվոդկաների հետ:

3. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽԱՌԸ ԵՂԱՆԱԿԸ

Այս եղանակը մշակել է ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Անաստասյանովյան ինստիտուտը: Այդ եղանակն օգտագործվում է մեղվաբուծական այն տնտեսություններում, որոնք պահեստի զուգավորված (բեղմնավորված) մայրեր չունեն:

Այս եղանակի էությունն այն է, որ նա հնարավորություն է տալիս մեղվադ գարնանը հիմնական ընտանիքներից կազմակերպելու փոքրիկ մասնատուներ (ատվոդկաներ) կամ նուկլեոսներ: Այդ ատվոդկաները կամ նուկլեոսները պետք է վերցնել 1—2 շրջանակի վրա, որից մի շրջանակը որդերով ու ձվերով և պատած մեղուներով, իսկ մյուսը մեղրով. այդ ատվոդկաները կամ նուկլեոսները պետք է տեղավորել առանձին-առանձին փեթակներում:

Մասնատուներ կամ նուկլեոսներ կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է դրադվել մայրահանման աշխատանքներով: Մայրահանման աշխատանքները պետք է սկսել այն ժամանակ, երբ մեղվանոցի մեղվի ընտանիքներում արդեն նկատվում են բուռնորդեր, որպեսզի նոր դուրս եկած (ծնված) մայրերը հնարավորություն ունենան զուգավորվելու բուսի հետ:

Մասնատուները կամ նուկլեոսները կազմակերպելուց 1—2 օր հետո, երբ դրանք արդեն զգացել են իրենց որբությունը և պատրաստել են մայրապտուկներ, դրանց պետք է տալ հասունացած մայրապտուկներ: Հասունացած մայրապտուկները պետք է ամրացնել մեղուների պատրաստած մայրաբջիջների (մայրապտուկների) անմիջապես վրա, որի շնորհիվ մեղուներն ավելի շուտ կընտելանան նրանց:

Մասնատուները կամ նուկլեոսները կազմակերպելուց 10—15 օր հետո, երբ մայրապտուկներից դուրս եկած մայրերը կզուգավորվեն (կբեղմնավորվեն) և կսկսեն ձվեր դնել, այդ ժամանակ մեր հիմնական ընտանիքներն արդեն հասած կլինեն այնպիսի ուժի, որ հնարավոր կլինի կիսման եղանակով բաժանել երկու հավասար մասերի և մայր չունեցող մասին տալ զուգա-

վորված (բեղմնավորված) մայր: Զուգավորված մայրերը վերցնում ենք մեր նոր կադմակերպված մասնատումներից կամ նուկլեոսներից, իսկ այդ որբացած մասնատումներին կամ նուկլեոսներին 2 օր հետո, երբ իրենք ցույց են տալիս իրենց որբության նշանները, նորից տալիս ենք հասունացած մայրապտուկներ:

Վերը նշված առաջին շրջանումը կատարելուց 20—25 օր հետո ամեն կիսած զույգ ընտանիքները արդեն ուժեղացած կլինեն, իսկ մասնատումներում (ատվողականերում) կամ նուկլեոսներում էլ մայրերը զուգավորված:

Ահա այդ ժամանակ կիսված ընտանիքներից պետք է վերցնել 2—3 շրջանակ որդերով ու ձվերով և պատած մեղուներով մեղրահացեր և միացնել հիմնական ընտանիքից վերցրած ատվողակաների կամ նուկլեոսների հետ և դրանց դարձնել 5—6 շրջանականոց նորմալ ընտանիքներ: Միացման աշխատանքները կատարելուց առաջ ատվողակայի կամ նուկլեոսի մայրը պետք է վերցնել մայրավանդակի մեջ, մայրավանդակի վարի անցքին կաղնել մոմի բարակ շերտ և կախել այդ նոր ուժեղացրած ընտանիքում, որպեսզի նոր միացված մեղուները չոչնչացնեն մորը, նրանք մորը վանդակից կհանեն այն ժամանակ, երբ միահոտվեն իրար հետ: Այս միացման աշխատանքը պետք է կատարել օժանդակ բերքի և օրվա ամենահեռուն աշխատանքի ժամերին, որպեսզի աշխատավոր մեղուների մեծ մասը լինի դաշտում: Ընտանիքների բաղմացման բոլոր աշխատանքները պետք է վերջացնել գլխավոր մեղրաբերքից առնվազն 25—30 օր առաջ, որպեսզի այդ ընտանիքները հնարավորութուն ունենան այդքան ժամանակամիջոցում բաղմանալու, ուժեղանալու և գլխավոր մեղրաբերքին որպես նորմալ ընտանիքներ մասնակցելու մեղրհավաքելու աշխատանքին: Այս խառը եղանակով օժանդակ մայրերի օգտագործման շնորհիվ ավելի շատ բերք կստացվի մեղվի ընտանիքներից, քան ատվողակաների եղանակի օգտագործումից:

Ահա այդ երեք հիմնական եղանակները, որոնց միջոցով հնարավոր է մեղվի ընտանիքում օգտագործել օժանդակ մայրեր: Երբեմն հնարավոր է նաև միևնույն տնտեսութուններում օգտագործել այս երեք եղանակները միասին:

Ատվողակաները և նուկլեոսները ժամանակին հասունացած մայրապտուկներով ապահովելու համար անհրաժեշտ է օժանդակ ընտանիքները (թե կիսման և թե ատվողակաների եղանակով) կադմակերպելուց 9—10 օր առաջ դրադվել մայրաբուծությամբ:

Մի չորրորդ միջոցառում էլ կա, որ վերաբերում է միայն քոչվոր մեղվաբուծական տնտեսություններին. այդ տարրեր գոհաների օգտագործումն է մեղվի ընտանիքների արտադրողականության բարձրացման համար:

Մեր մեղվաբուծական տնտեսություններից շատերը այդ միջոցառումը ճշտությամբ չեն օգտագործում, որովհետև մինչև օրս հաշվի չի առնված մի շատ կարևոր հանգամանք, այն է՝ բոլոր միջոցառումները պետք է նպաստեն սկզբնական շրջանում մեղվի ընտանիքների խնամուխիվ բազմացմանը, որից հետո միայն այդ բազմացված մեղուներով պետք է օգտագործել գլխավոր մեղրաբերքը:

Դրա համար պետք է մեղուները դաշտային շրջաններում պահել այնքան ժամանակ, քանի դեռ ընտանիքում որդի սահմանափակում և մեղրի կուտակում չի նկատվել: Եթե մեղվի ընտանիքները դաշտային շրջաններում օգտագործեցին գլխավոր մեղրաբերքը, դա կնշանակի, որ լեռնային շրջաններում այդ ընտանիքները գլխավոր մեղրաբերքի ժամանակ կգրադվեն ոչ թե մեղր կուտակելով, այլ բազմանալով: Այդ երևույթը բացատրվում է նրանով, որ դաշտային շրջաններում մոտավորապես մայիսի 25-ից մինչև հունիսի 20-ը լինում է մեղրաբերք, այդ ժամանակաշրջանում մեղվի ընտանիքները դեռ իրենց զարգացման լրիվ աստիճանին չհասած՝ զրադվում են մեղր կուտակելով և սահմանափակում են մայր մեղվի ձվադրումը: Այսպիսով մեղվի ընտանիքում աստիճանաբար դանդաղում է աճեցողությունն ու բազմացումը, իսկ եղած մեղուների մեծ մասը այդ բերքի ընթացքում մաշվում, ծերանում և մահանում են: Այդ ընտանիքների մեղրը քամելուց հետո, երբ նրանց տեղափոխում են լեռնային շրջան, որտեղ նորից սկսվում է նրանց բազմացումը, 21 օրից հետո միայն այդ ընտանիքներում սկսվում է մեղվի աճը:

Երբ այդ նոր ծնված մեղուները 15 օրից հետո դառնում են աշխատավոր մեղուներ, լեռնային շրջաններում գլխավոր մեղրաբերքի կեսը արդեն անցած է լինում: Այսպիսով կատարվի այն, որ երկու դեպքում էլ այդ մեղվի ընտանիքներն իրենց լրիվ զարգացման չհասած օգտագործում են գլխավոր մեղրաբերքը:

Այս երևույթից խուսափելու և մեր առաջարկած մեթոդը իր նպատակին լիակատար ծառայեցնելու համար մեղվաբուծական տնտեսությունները պետք է ամբողջովին ղեկավարվեն հե-

տեյալ սկզբունքով. զլիսավոր մեղրարերքը պետք է օգտադործել միմիայն մեղվի ընտանիքների մաքսիմալ բազմացումից հետո: Ինչպես պետք է հատկանալ այդ. օրինակ, եթե դաշտային շրջաններում մեղվապահները կնկատեն մեղվի ընտանիքներում որդերի սահմանափակման նշաններ հօգուտ մեղրի կուտակման, ապա պետք է անմիջապես մեղվի ընտանիքները տեղափոխեն կիսալեռնային շրջանները. հենց որ կիսալեռնային շրջաններում նորից նկատվի այդպիսի երևույթ, մեղվի ընտանիքները այդ տեղից նույնպես պետք է տեղափոխվեն լեռնային շրջանները՝ իրենց վերջին կայանը, որտեղ մտադիր են օգտադործել զլիսավոր բերքը¹: Այստեղ չպետք է անտես առնել մի շատ կարևոր հանդամանք. մեղվի ընտանիքներին կիսալեռնային կամ լեռնային շրջանները տեղափոխելուց առաջ թողնել, որ նրանք իրենց բներում կուտակեն անհրաժեշտ քանակությամբ մեղր և ծաղկափուշի, որ բավականացնի նրանց մինչև կիսալեռնային կամ լեռնային շրջաններում օժանդակ մեղրարերք սկսվելը. հակառակ դեպքում, սրկառ կերապաշար ունենալու պատճառով, ընտանիքների տճեցողությունը կդանդաղի:

Ահա այն բոլոր միջոցառումները, որոնք մանրակրկիտ և ճշտությամբ կատարելու դեպքում կբարձրանա մեղվի ընտանիքի ընդհանուր արտադրողականությունը: Այս մեթոդը կիրառելու դեպքում անհրաժեշտ է, որ դարնանը մեղվի ընտանիքները լինեն նորմալ² ուժի, ունենան 1,2—1,8 կիլոգրամ մեղու և 12—15 կգ կերապաշար, նայած մեղվանոցի տեղին՝ դաշտային շրջանում է թե լեռնային, որովհետև ինչքան մեղվի ընտանիքը դարնանը ուժեղ լինի, այնքան նրա արտադրողականությունը բարձր կլինի:

Մեղվի ընտանիքների արտադրողականության բարձրացման այս նոր մեթոդը, որը մշակված է նախկին անասնապահական փորձակայանում, կարելի է կիրառել մեղվաբուծական բոլոր տնտեսություններում որոշ փոփոխություններով:

Օրինակ, 1948 թ. Ոսկելագի «Դեպի կոմունա» կոլխոզի մեղվապահ Ա. Սարգսյանը իր մեղվանոցի 60 մեղվի ընտանիքները խնամել է վերը նշված մեթոդի՝ ատվողականների եղանակով:

Չնայած 1948 թ. երաշտ և մեղվաբուծության համար արտակարգ անբարենպաստ լինելուն, նա իր ունեցած մեղվի ըն-

¹ Մեղվանոցը տեղափոխելուց առաջ անհրաժեշտ է ստուգել տվյալ վայրը, ուր պետք է տեղափոխվի մեղվանոցը, երբ բերքի բոլոր ավյալները կան, այն ժամանակ միայն մեղվանոցը տեղափոխել:

տանիքների քանակը հասցրել է 100 նոր ընտանիք և ամեն
մի հիմնական ընտանիքից ստացել միջին հաշվով՝

համախառն մեղր 40,70 կիլոգրամ

» մոմ 1200 գրամ

Իսկ № 2 կոնտրոլ մեղվանոցի 60 մեղվի ընտանիքներից
ստացվել է ընդամենը 10 նոր ընտանիք, և ամեն մի հիմնական
ընտանիքից ստացվել է միջին հաշվով՝

համախառն մեղր 12 կիլոգրամ

» մոմ 120 գ

1. Եթե մինչև օրս մեղվապահի և օգնականի խնամքին
հանձնվում էր նորմալ կարգով 60—80 մեղվի ընտանիք, ապա
այդ մեթոդի օգտագործման դեպքում պետք է հանձնել՝ ատվոր-
կաների եղանակով բաղմացվող մեղվանոցներից 50—60 ընտա-
նիք, իսկ կիսման եղանակով՝ 40—50 մեղվի ընտանիք, որպեսզի
մեղվապահները կարողանան լրիվ չափով ապահովել նրանց ամ-
բողջ խնամքը:

2. Մեղվի ընտանիքը պետք է պահել ուժեղ, այսինքն՝ մե-
ղուները գարնանը պետք է պատեն 6—8 Դադան-Բլաթի, կամ
8—9 Լանգստրոտի միջշրջանակ (նայած զոնաներին), որը մո-
տավորապես հավասար է 1,2-ից—1,8 կգ մեղվի:

3. Գարնանը մեղվի ընտանիքները պետք է ապահովված
լինեն լրիվ կերապաշարով՝ 12—15 կգ (նայած զոնաներին):

4. Գարնանը օժանդակ մեղրաբերքի բացակայության ժա-
մանակ, երբ եղանակները արդեն տաքացել են, մեղվի ընտա-
նիքներին անհրաժեշտ է կերակրել շաքարաջրի կամ մեղրի փոքր
բաժիններով (0,2-ից—0,3 կգ) որպես գրգռիչ կեր, որպեսզի ըն-
տանիքների աճման և բաղմացման տեմպը չզանդաղի:

5. Մեղվի ընտանիքների կիսման եղանակով բաղմացում-
ներն ապահովելու համար եթե հատուկ մայրաբուծական տնտե-
սություններ չկան, սրանցից կարելի լինե՞ր վերցնել բեղմնավոր-
ված մայրեր, ապա անհրաժեշտ է գարնանն ունենալ հիմնական
ընտանիքների 110⁰/₀-ի չափով նուկլեոսներ իրենց բեղմնավորված
մայրերով:

6. Վաղ գարնանից մեղվանոցներում պետք է զբաղվել մայ-
րաբուծությամբ և բուռնաբուծությամբ՝ հաջորդ կիսումներն օժան-
դակ մայրերով ապահովելու համար:

7. Օժանդակ մայրերի օգտագործման նպատակով ընտա-
նիքների բաժանումը պետք է դադարեցնել՝ կիսման եղանակի

օգտագործման դեպքում՝ գլխավոր մեղրաբերքից 25—30 օր առաջ, իսկ ատվողկաների եղանակի կիրառման դեպքում՝ 40—45 օր առաջ, որպեսզի այդ կազմակերպված ընտանիքների մեղուները լիակատար հնարավորություն ունենան ուժեղանալու և բազմանալու գլխավոր մեղրաբերքը օգտագործելու համար:

8. Գլխավոր մեղրաբերքից հետո օժանդակ ընտանիքների մի մասից վերցնել մորը երկու շրջանակ մեղվով և մեղրով ու դրանցով կազմակերպել հիմնական ընտանիքների 110⁰/₀-ի չափով նուկլեոններ՝ հաջորդ տարին օժանդակ մայրերով ապահովելու համար, իսկ դրանց մեղուները միացնել հիմնական ընտանիքներին՝ վերջիններն էլ ավելի ուժեղացնելու համար, իսկ այդ ընտանիքների մեղրը հանել որպես ապրանքային մեղր:

9. Այս մեթոդը կարելի է կիրառել ամեն սիստեմի փեթակներում (Դադան-Բլատի, Լանգստրոտի, Լիժակի և այլն), որոնց մեջ տեղավորվում են 12-ից ոչ պակաս շրջանակներ: Այս մեթոդի կիրառման դեպքում ամեն մի հիմնական ընտանիքի համար տնտեսությունը պետք է ունենա հետևյալ սարքավորումը և նյութերը.

1. Դատարկ արկղներ 4—5 հատ՝ կիսման եղանակի համար.

» » 2—3 » ատվողկաների » »

2. Մոմաթերթ 5 կգ՝ կիսման եղանակի համար

» 2 » ատվողկաների » »

3. Շրջանակներ 80 հատ՝ կիսման եղանակի համար.

» 35 » ատվողկաների եղանակի համար:

4. Շշեր կամ տաքացման ապարատներ 8 հատ՝ կիսման եղանակի համար:

4 հատ՝ ատվողկաների եղանակի համար:

5. Մեղր կամ շաքարավաղ 7 կգ՝ կիսման եղանակի համար և 4 կգ՝ ատվողկաների համար:

Ահա այն բոլոր միջոցառումները, որոնց կիրառումով կը բարձրանա մեղվի ընտանիքի արտադրողականությունը:

ՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԲԵՐՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Մեր արտադրության մեջ սովորաբար ամեն մի մեղվի ընտանիքից ստացվում է 200—600 գրամ համախառն մոմ, որպիսի քանակությունը ոչ միայն չի ապահովում մեր օրեցօր աճող սոցիալիստական արդյունաբերությանը, այլև չի բավարա-

քում մեր ուժեղ թափով զարգացող մեղվարածության պահանջները:

Երբ սկսվում է օժանդակ մեղրաբերքը, և կշռափեթակը (այն փեթակը, որը դրված է կշեռքի վրա՝ օրվա բերքը ցույց տալու համար) ցույց է տալիս օրական 500—600 գրամ նեկտարի և ծաղկափոշու մուտք փեթակում, ահա այդ ժամանակ երիտասարդ մեղուները լավ սնվում են, և նրանց մոմային գեղձերն սկսում են արտադրել առատ մոմ: Ինչքան աշխատավոր մեղուները շատ քերք բերեն փեթակ, այնքան կբարձրանա մոմի արտադրողականությունը երիտասարդ մեղուների մոտ: Որպեսզի մեղվի ընտանիքներից շատ մոմ ստանանք, անհրաժեշտ է փոխել, խախտել մեղուների բնական կարգը, այսինքն՝ խախտել նրանց բնի ամբողջությունը և բնում ստեղծել ազատ տարածություն, որպեսզի մեղուներն ստիպված լինեն ավելի շատ մոմ արտադրել և ստեղծված այդ ազատ տարածությունը լցնել մեղրահացերով, որովհետև մեղուներն իրենց բնում ազատ տարածություն չեն սիրում:


Եթե ազատ տարածություն չտանք բնում, ապա երիտասարդ մեղուների մոմի արտադրանքը կլինի շատ քիչ: Մեկ կիլոգրամ մոմ արտադրելու համար մեղուները ծախսում են մոտավորապես 3,5—3,6 կգ ավելորդ մեղր և դրան դումարած որոշ քանակությամբ ծաղկափոշի:

ա) ԾՈՄ ՄՏԱՆԱԼՈՒ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Այս եղանակի էությունը կայանում է հետևյալում. երբ մեղուների մոմ արտադրող գեղձերը սկսում են մոմ արտադրել, ահա այդ ժամանակ մեղվի ընտանիքի բնում մեկ կամ երկու կողքից (նայած ընտանիքի ուժին) բաց ենք անում ազատ տարածություն, այսինքն՝ կողքի մեղրով մեղրահացերը հեռացնում ենք և ստեղծում ազատ տարածություն որդով ու ձվով և կողքի մեղրով մեղրահացի միջև ու այդ ազատ տարածության մեջ դնում ենք բուրբուկին դատարկ (առանց մոմաթերթի), կամ շրջանակների, վերին ձողին մոմաթերթի նեղ ժապավեն (շերտ) կպցրած շրջանակ (տես նկ. 12):

Մեղուները իրենց բնի ներսում բացված ազատ տարածություն չսիրելով, անմիջապես սկսում են մեղրահացեր (դալաղ)

գործել. ամեն 2—3 օրը մեկ անգամ այդ նոր գործած մեղրահացը (դալաղը) կտրում ենք որպես մոմ, իսկ դատարկ շրջանակը նորից դնում իր տեղը և այսպես շարունակ, մինչև գլխավոր մեղրաբերքի սկսվելը: Սխալ է այն պրակտիկան, որ կառուցողական շրջանակները օգտագործում են մինչև գլխավոր մեղրաբերքի վերջը, որովհետև գլխավոր մեղրաբերքի ժամանակ մեղուները մեղրահացեր գործելու հետ զուգընթաց բջիջների մեջ լցնում են մեղր, որը անտեսանելի ժամանակ օգուտ չէ:



Նկ. 12. կառուցողական շրջանակ:

Այս եղանակի օգտագործումով, իհարկե, կստացվի ավելի շատ մոմ, համեմատած սովորական ձևով պահվող ընտանիքների ստացածի հետ:

բ) ՄԵՂՐԱՀԱՑԵՐ (ՉԵՉԵՐ) ԳՈՐԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Հայաստանի Ռեսպուբլիկական Անասնապահական փորձակայանը 1938 թ. մշակեց և արտադրության հանձնեց այս եղանակը, որի էությունը հետևյալումն է:

Օժանդակ մեղրաբերքն սկսելու մոմենտին, երբեմն նույն իսկ դրանից առաջ (երբ անտեսանելի ժամանակ մեղրահացերի սուր պահանջ է զգում, մեղուներին տալիս ենք զրգոխ կեր, որպես օժանդակ բերք), երբ մեղուների մոմ արտադրող գեղձերն սկսում են մոմ արտադրել, այդ ժամանակ մեղվի ընտանիքի բնի մեկ կամ երկու կողքից (նայած ընտանիքի ուժին և կերապաշարին) մեղրով շրջանակները հեռացնում ենք բնի որդով ու ձվով շրջանակներից և ազատ տարածություն ստեղծում թրթուրների (որդի ու ձվի) և մեղրով մեղրահացերի միջև և այդ ազատ տարածու-

թյան մեջ դնում ենք պատրաստի շրջանակներին կպցրած արհեստական մոմաթերթեր:

Մեղուներն իրենց բնում ազատ տարածություն չսիրելով՝ անմիջապես սկսում են մեր տված արհեստական մոմաթերթերը վերակառուցել մեղրահացերի: Հաջորդ օրը բաց ենք անում փեթակը և ստուգում. եթե արհեստական մոմաթերթերն արդեն լրիվ կամ 80% -ով կառուցել են, այսինքն՝ նրանց բջիջների պատերը բարձրացրել 10—12 մմ և դարձրել են մեղրահացեր (չեչեր), ապա այդպիսիները հանում ենք մեղվի ընտանիքի բնից և նրանց տեղը նորից դնում արհեստական մոմաթերթեր և այսպես շարունակ, մինչև գլխավոր մեղրաբերքն սկսվելը: Ամեն մի մեղրահաց կառուցելիս մեր տված արհեստական մոմաթերթերի քաշի վրա ավելացնում են 60—70-ական գրամ մոմ:

Գլխավոր մեղրաբերքի ժամանակ անհրաժեշտ է մեղուներին օգտագործել նեկտար բերելու, վերամշակելու և մեղր կուտակելու աշխատանքով, և ոչ թե մոմ արտադրելով ու մեղրահացեր կառուցելով:

Մինչև գլխավոր մեղրաբերքի սկսվելը մեղվի ընտանիքներից ստացած պատրաստի մեղրահացերը հավաքում և կուտակում ենք պահեստում, բացառությամբ նրանց, որոնց մեջ մայրը կառուցման հետ զուգընթաց ձվեր է դրել, եթե տեղ կա, այդպիսիները պետք է տեղափոխել նույն ընտանիքի բնի կենտրոնը. իսկ եթե բունն արդեն լցված է, ապա այդպիսի ձվերով լցված մեղրահացերը պետք է տալ մեղվանոցի նոր կազմակերպված ձաղերին կամ թույլ ընտանիքներին:

Պահեստում հավաքած մեղրահացերը հիմնականում օգտագործում ենք երեք ուղղությամբ.

ա) թույլ ընտանիքներին պատրաստի մեղրահացերով օգնելու և ուժեղացնելու նպատակով:

բ) Նոր կազմակերպված ձաղերին օգնելու, ուժեղացնելու:

գ) Պատրաստի մեղրահացերը կուտակում ենք պահեստում մինչև գլխավոր մեղրաբերքն սկսվելը կամ նրա նախօրյակը և դրանցով, այսինքն՝ պատրաստի մեղրահացերով (չեչերով) մեղվանոցի բոլոր ուժեղացրած ընտանիքների վրա կորպուսներ, (վերնահարկեր) դնելու համար. այսպիսով կրարձրանա մեղվի ընտանիքների մեղրի բերքատվութունը:

Այս եղանակի նշանակութունը մեծ է ոչ միայն նրա համար, որ ստանում ենք մեծ քանակությամբ պատրաստի մեղ-

քահանայեր, հետեւարար և մոմ, այլև նրա նշանակութիւնը է՛լ ավելի մեծ է, ինչպէս վերեւը նշեցինք, մի շարք այլ կողմերով:

1. Երբ թույլ ընտանիքներին և վաղ դարնան կազմակերպած ձաղերին պատրաստի մեղրահացերով օգնում ենք այն ժամանակ, երբ նրանք իրենք իրենց միջոցներով այդ անել չէին կարող, դրանով իսկ մենք օգնում ենք նրանց աճմանը, որի շնորհիւ այդ ընտանիքներն ավելորդ էներգիա չեն վատնի մոմ արտադրելու և մեղրահացեր կառուցելու համար. մայրը գտնելով պատրաստի աղատ բջիջներ՝ անմիջապէս կոկսի ձվեր դնել, որի հետեւանքով թույլ ընտանիքները կուժեղանան, այն է՝ մեղուները կբաղմանան և գլխավոր մեղրարերքին մեծ քանակութեամբ մեղուններով, ինչպէս նորմալ ընտանիքներ, առատ մեղր կհավաքեն և կկուտակեն:

2. Այս եղանակի օգտագործումով ամեն տարի մեղվանոցում կկատարվի բնի մեղրահացերի թարմացում, հին սեւացած մեղրահացեր չեն լինի, որովհետեւ ամեն տարի խոտանման կենթարկենք բոլոր այն մեղրահացերը, որոնք անկանոն են կառուցված, որոնց բջիջների մեծ մասը բոռարջիջներ են, կամ թե չէ նրանց մեջ դարգացել են 10-ից ավելի սերունդ մեղուներ: Այս եղանակի օգտագործումով մեղվանոցում կպակասի հիվանդ ընտանիքների քանակը, որովհետեւ շարքից հանում ենք այն մեղրահացերը, որոնք հիվանդութեան տարածման հիմնական աղբյուրներից մեկն է հանդիսանում:

Այն մեղվանոցներում, որոնք նոր են կազմակերպվել և անսեւսութիւնը չունի համապատասխան քանակութեամբ մեղրահացեր, վաղ դարնանը, երբ բացակայում է օժանդակ մեղրարերքը և մեղուները սովորաբար մոմ չեն արտադրում, մեղվի ընտանիքներին պետք է առանց ընդմիջումների կերակրել դըրդուիչ կերով, այն է՝ շաքարի կամ մեղրի թույլ լուծույթով (1 կգ շաքարին խառնել 1 կգ ջուր): Այսպիսով մեղուները ժամանակից վաղ կսկսեն արտադրել առատ մոմ և կառուցել մեծ քանակութեամբ մեղրահացեր (չեչեր):

Իսկ այն մեղվանոցներում, որոնք մոմով և մոմաթերթով ապահովված չեն, կարելի է առաջին տարին կիրառել մոմ ստանալու խառը եղանակ, այն է՝ սկզբից մեղվանոցում պետք է կիրառել կառուցողական շրջանակների օգտագործման եղանակը, և երբ մեղվանոցում կկուտակվի զգալի քանակութեամբ մոմ, այդ մոմը պետք է անմիջապէս վերամշակման հանձնել և դրա-

նից ստացած մոմաթերթերն օգտագործել մեղվանոցում մեղրահացեր (չեչեր) կառուցելու եղանակը կիրառելու համար:

Վերը նշված միջոցառումների ճշգրիտ կիրառումով միայն Հայաստանի մեղվարուծությունը իրեն կապահովի մեղրամսմով և կարճ ժամանակից հետո կսկսի իր մոմի ավելցուկով ֆհնեյ նաև մեր արդյունաբերությանը:

ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Քանի որ մեր մեթոդի կիրառումը խոշոր չափով կապ ունի օժանդակ մայրերի մաքսիմալ օգտագործման հետ, անհրաժեշտ ենք համարում մի քիչ ավելի մանրամասն կանոց առնել վաղ դարնան արհեստական մայրահանման և բուսահանման աշխատանքների կազմակերպման վրա:

Մեղվարուծական տնտեսություններում որակի համար պայքար պետք է տարվի ոչ միայն մեղվի ընտանիքների խնամքի ու կերակրման պայմանների բարելավմամբ, այլև նրանց տնտեսապես օգտակար ժառանգական հատկանիշների բարելավմամբ, մեղուների արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ:

Մեղվարուծության մեջ մեղվի մայրը հանդիսանում է մեղվի ընտանիքի առանցքը. ընտանիքի զարգացման ամբողջ ընթացքն ու նրա արտադրողականության չափը մեծապես կապված են մոր պտղաբերությունից և ձվադրման ինտենսիվությունից:

Վերահիշյալն ինքնին ցույց է տալիս, թե ինչ խոշոր նշանակություն ունի մայրերի որակը. այդ խիստ պատճառով մայրերը պետք է բուծել մեղվանոցի աշնայիսի ընտանիքներից, որոնք ունեն բարձր արտադրողականություն:

Արհեստական մայրահանումը հիմնավորվում է մեղվարուծությանն արդեն վաղուց հայտնի այն երևույթով, որ երբ մեղուներն այս կամ այն պատճառով կորցնում են իրենց մորը, իրենց ընտանիքում եղած փոքրահասակ աշխատավոր մեղվի որդիներից, նրանց առատ կերակրելով և բջիջները վերափոխելու միջոցով, պատրաստում են մայրեր: Այստեղից հետևում է, որ արհեստական մայրահանում կարելի է կատարել այն դեպքում, եթե ունենք՝

1. Մայր ընտանիք (տոհմական), որից պետք է ոտանալ որդեր ու ձվեր՝ մայրացուներ խնամելու համար:

2. Խնամող ընտանիք, որը նույնպես պետք է լինի տոհմական, որպեսզի մեր տված տոհմական որդերին ու ձվերին խնամի որպես մայրացուներ:

Տոհմական ընտանիքները պետք է ընտրել մեղվանոցի աշնալիսի ընտանիքներից, որոնք նույնաման խնամքի, կերակրման և կլիմայական պայմաններում աչքի են ընկնում իրենց բարձր արտադրողականությամբ: Այս ընտրած ընտանիքները պետք է բաժանել հիմնականում երկու խմբի. առաջինը՝ տոհմական մայր ընտանիքներ, որոնցից պետք է ստանալ որդեր ու ձվեր տոհմական մայրեր ստանալու համար, իսկ երկրորդ խումբը՝ տոհմական հայր արտադրող ընտանիքներ, որոնցում պետք է բուծել տոհմական բուեր և դրանցից մի քանիսը օգտագործել որպես խնամող ընտանիքներ, որոնք պետք է լինեն ուժեղ՝ 1, 2—2 կգ մեղվով ու կերի առատ պաշարով: Խնամող ընտանիքները պետք է լինեն ամեն տեսակի հիվանդություններից զերծ:

Տոհմական մայր ընտանիքներից միահասակ որդեր ու ձվեր ստանալու համար անհրաժեշտ է, որ մայրը 1—2 օրով դրվի մեկուստարան, որտեղ նա համատարած կերպով ձվադրի այդ նպատակի համար դրած չեչի մոտավորապես բոլոր բջիջներում:

Բոտարուծության հատկացված տոհմական ընտանիքների մեջտեղում պետք է դնել բոտարջիջներով մեղրահացեր և այդ ընտանիքներին սխտեմատիկաբար կերակրել դրդոխ կերով, որպեսզի մայրն այդ բոտարջիջներում դնի չբեղմնավորված ձվեր: Մեղվանոցի մյուս ընտանիքներում պետք է պայքար տանել բուերի դեմ, որպեսզի հնարավորության չափով մայրերի դուրսավորումը կատարվի տոհմական բուերի հետ:

Արհեստական մայրահանման եղանակները բաժանվում են երկու խմբի.

ա) երբ որդերը բնական բջիջներից փոխադրում ենք արհեստական բջիջների մեջ ու որպես մայրացուներ տալիս ենք խնամող ընտանիքներին:

բ) երբ որդերը տալիս ենք խնամող ընտանիքներին որպես մայրացուներ՝ իրենց բնական բջիջներով:

Այս երկու եղանակներն էլ ունեն իրենց դրական և բացասական կողմերը: Օրինակ, որդերի փոխադրման եղանակի դրական կողմն այն է, որ խոշոր մայրաբուծական անտեսություններում այդ նպատակի համար չենք ոչնչացնի մեծ քանակու-

Թյամբ մեղրահացեր, որոնք մեղվարուծական տնտեսությունների համար շատ թանկ արժեն:

Այս եղանակի բացասական կողմն այն է, որ այս եղանակով մայրահանում կատարելու համար անհրաժեշտ է ունենալ հատուկ սարքավորում, տաքացրած սենյակ, մասնազետ մեղվարույժ, որը ախրապետում է մայրարուծության տեխնիկային:

Երկրորդ եղանակի դրական կողմն այն է, որ չի պահանջում հատուկ սարքավորում և մասնազետ մեղվարույժ, իսկ բացասական կողմն այն է, որ մեծ տնտեսություններում մայրահանման աշխատանքների համար անհրաժեշտ է ունենալ մեծ քանակությամբ մեղրահացեր (չեչեր):

Մեր արտադրության մեջ այս երկու եղանակներից ամենից շատ օգտագործվում է երկրորդ եղանակի այս կամ այն վարիանտը:


ա) ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ՊԵՆԱՉԵԿԻ ԵՂԱՆԱԿԸ

Այս եղանակը մեր պայմաններում տալիս է շատ լավ արդյունք, որովհետև չունի այն բարդություններն ու նրբությունները, որ ունեն Գուաի, Պերմիդոնովի եղանակները:

Երբ տոհմական ընտանիքի մայրը մեր դրած շրջանակի վրա արդեն ձվադրել է, 2—3 օր հետո պետք է վերցնել այդ մեղրահացը, տանել աշխատանքի սենյակը, դնել հարթ սեղանի վրա ու տաքացրած սուր զանակով հեռացնել յուրաքանչյուր չորս շաբաթ բջիջներից 3 շաբաթ, ինչպես զուգահեռական, այնպես էլ ուղղահայաց, իսկ հետո առամի փոքր խողանակով ոչնչացնել այդ հեռացրած երեք շաբաթում եղած որդերն ու ձվերը, իսկ մնացած բջիջների բերանները փայտի փոքրիկ կաղապարով լայնացնել ու այդ ձևով տալ խնամող ընտանիքին:

Խնամող ընտանիքին մայրացուներ տալուց 2—3 ժամ առաջ պետք է որբացնել, այսինքն՝ խնամող ընտանիքի մայրը և նրանում եղած բոլոր բաց ձվերն ու թրթուրները (որդերը) հեռացնել և ընտանիքում թողնել միմիայն կնքված հարսնյակներ:

Խնամող ընտանիքը որբացնելու ժամանակ պետք է շատ զգուշ լինել, որպեսզի փակ հարսնյակների բջիջների արանքներում բաց ձվեր ու թրթուրներ (որդեր) չմնան, որովհետև բավական է, որ խնամող ընտանիքում մի քանի հատ բաց թրթուր (որդ) ու ձու մնա, որպեսզի մեր ամբողջ աշխատանքն իզուր կորչի:



Նկ. 13. Պեխաշեկի եղանակով պատրաստված չեչ.

Այգալիսի դեպքերից խուսափելու համար հաճախ խորհուրդ է տրվում խնամող ընտանիքներին սրբացնելու ժամանակ նրանցից հանել բոլոր հարսնյակները, թրթուրներն (որդերն) ու ձվերը (բաց կամ փակ — դա միևնույնն է). այս դեպքում մեղվի ընտանիքն իր սրբությունն ավելի շուտ է զգում, և մեղուներն ավելի շատ են դրդավում, որի շնորհիվ խնամում են մեծ քանակությամբ մայրացուներ: 2—3 օր հետո խնամող ընտանիքներին նորից պետք է վերադարձնել իրենց հարսնյակները (կրնքված որդերը), որպեսզի նրանք չափից ավելի չթուլանան:

Մայրացուներով պատվաստված մեղրահացը պետք է դնել խնամող ընտանիքի բնի շրջանակների վրայից՝ մայրացու բջիջների բերանները դեպի ցած. իհարկե, այդ մայրացուներով չեչի տակից պետք է դնել նույն շրջանակի մեծության 3—3,5 ամբարձրությամբ մի այլ շրջանակ, որով մեղուներին հնարավորություն կտրվի մայրապտուկներ կառուցելու ազատ տարածության մեջ, առանց կպցնելու բնի շրջանակներին:

Խնամող ընտանիքին պատվաստում տալուց հետո բնի կողքերից պետք է տալ արհեստական տաքացումներ (տաք ջրով), իսկ մեղրահացի վրայից պետք է դնել բարակ դիկտի կտոր՝ շրջանակի մեծությամբ. որպեսզի այս ամենը չխանդարի կափարիչը ծածկելուն, պետք է կափարիչի և բնի արանքում դնել վերնահարկ, որի մեջ կտեղավորվի պատվաստման չեչը, և նրա վրայից դնել տա-


քացման բարձր: Խնամող ընտանիքին սխառմատիկաբար ամեն օր պետք է առատ կերակրել մինչև մայրապտուկները սերեկելը (կնքելը) մեղրի և ծաղկափուշու խառնուրդով:

Պատվաստումը տալուց 9—10 օր հետո պետք է խնամող ընտանիքներից հասունացած մայրապտուկները վերցնել և բաժանել նոր կազմակերպված ատվողկաներին ու նուկկուսներին:


Բ) ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ՑԱՆԴԵՐԻ ԵՂԱՆԱԿԸ

Այս եղանակը մեղ մատ, արտադրության մեջ նույնպես զտել է խոշոր ընդունելություն իր մատչելի և պարզ տեխնիկայի շնորհիվ:

Այս եղանակի էությունը նրանումն է, որ տոհմական թըր-



Նկ. 14. Հենարաններով շրջանակ, որի մեջ տեղավորվում են ձողերը պատրոններով (Ցանդերի եղանակով)




Նկ. 15. Պատրոնների վրա խնամված մայրապտուկներ (Ցանդերի եղանակով)

թուրներն (որդերն) իրենց բնական բջիջներով մեկ-մեկ կտրատում և մոմով կպցնում են փայտից հատուկ պատրաստված կտորների վրա: Այս փայտի կտորները նախօրոք իրար կողք-

կողքի ամրացված են շրջանակների երկարությամբ՝ ձողերի վրա: Պատվաստումները տալուց հետո այդ ձողերն իրենց փայտի կտորներով դնում են շրջանակների մեջ և տեղավորում խնամող ընտանիքների բնի մեղրով լցրած շրջանակների մեղրահացերի արանքում (տես նկ. 14—15):

Վերը նշված պատրոնների կամ փայտի կտորների փոխարեն կարելի է օգտագործել փոքրիկ եռանկյունի սեպիկներ:

Սեպիկներ կարելի է պատրաստել լուցկու դատարկ տուփից կամ դիկտի կտորը դնել տաք ջրի մեջ ու նրա շերտերը բաժանել իրարից և այդ բարակ շերտերից կտրել եռանկյունի սեպիկներ, որոնց երկու կողքերի երկարությունը պետք է լինի 35 միլիմետր, իսկ մեկ կողմի լայնքը 15 միլիմետր:



Նկ. 16. Պատվաստված բջիջը ամրացված սեպիկին:

Տոհմական թրթուրներն իրենց ընական բջիջներով մեկ առ մեկ կտրում և հալած մամի միջոցով կապնում ենք սեպիկի վրա (տես նկ. 16):

Բջիջները սեպիկների վրա կապնելուց հետո հատուկ կաղապարով լայնացնում ենք մայրացու բջիջների բերանը, որից հետո խնամող ընտանիքի կենտրոնից հանում ենք մեկ մեղրով լիքը մեղրահաց և սեպիկների սուր ծայրը մտցնում մեղրահացերի բջիջների մեջ՝ միշտ մայրացու բջիջների բերանը դեպի ցած: Սեպիկները պետք է դասավորել շախմատաձև, մեկը մյուսից 35 միլիմետր հեռավորության վրա, իսկ շարքերը իրարից 50 մմ հեռավորությամբ:

Մայրապտուկները հասունանալուց հետո սեպիկները, իրենց մայրապտուկներով, խնամող ընտանիքներից հանում են և բաժանում անմայր ընտանիքներին և նոր կաղմակերպված արհեստական ձողերին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Առաջարան	3
Մեղվի բնականիքի կազմը	5
Աշխատավոր, մայր և բոլ մեղունների դարգացումը	10
Բնականիքների ներսում մեղվի արհեստական բաղադրման բիոլոգիական հիմունքները	12
Բերքի բարձրացման կոմպլեքս միջոցառումները	14
1. Օժանդակ մայրերի օգտագործումը կիսման հղանակով	24
2. Օժանդակ մայրերի օգտագործման մասնատման (ատվողականների) հղանակը	27
3. Օժանդակ մայրերի օգտագործման խառը հղանակը,	30
Մոմի բարձր բերք ստանալու հղանակները	35
ա. Մոմ ստանալու կառուցողական շրջանակների օգտագործման հղանակը	36
բ. Մեղրահացեր (չեչեր) դործելու հղանակը	37
Մայրահանման արհեստական հղանակները	40
ա. Մայրահանման Պեխաչեկի հղանակը	42
բ. Մայրահանման Յանդերի հղանակը	44



Պատ. խմբագիր Ա. ՌՈՒԽԿՅԱՆ

Տեխ. խմբագիր Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ Լ. ՄԲՈՎՅԱՆ

Հանձնված է արտադրության 16 IV 1949 թ. Ստորագրված է տպելու
5 V 1949 թ. ՎՖ 01988, պատվ. 255, տիրաժ 1000: Տպագր. 3 մամուլ.
մեկ մամուլում 38400 տպ. նիշ:

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան, 104.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007911

~~1125 2 11~~ / 30

A $\frac{11}{19364}$